ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ ПИСЬМО В РЕДАКЦИЮ

ՄԻ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՆՏԵՂՅԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Հարգելի խմբագրություն, նամակիս առիթը «Պատմա-բանասիրական հանդես»-ի 2007 թ. № 1-ում տպագրված «Օտար պատմագիրներից հիշատակված Հայաստանի ամենավաղ արքան» վերնագրով հոդվածն է: Տորք Դալալյանի այս հոդվածը, հավատացած եմ, հարուցած կլինի հին դարերի պատմության մասնագետներից շատերի զարմանքը՝ ինչպես հոդվածում տեղ գտած նյութի նկատմամբ հեղինակի ցուցաբերած կամայական մոտեցումների, այնպես էլ իր «հայտնագործությունների» վերաբերյալ ավելի վաղ արտահայտված կարծիքների և տեսակետների անտեսման պատճառով: Այսպես՝ ըստ հոդվածագրի. «Ամեն դեպքում, Բարզանես կոչվող արքայի մասին տեղեկությունը հանիրավի անուշադրության է մատնվել և ըստ արժանվույն չի գնահատվել ու չի մեկնաբանվել հայագիտության ու արևելագիտության մեջ» (էջ 250):

Այս տողերը հեղինակը հրամցնում է «Բարզանեսի մասին առկա տեղեկությունները և կարծիքները» ենթավերնագրի տակ: Հիշեցնեմ Ն. Ադոնցի կարծիքը՝ տեղ գտած այն նույն գրքում, որին հղում ունի նաև հոդվածագիրը: Ն. Ադոնցը, չափազանցություն համարելով Դիոդորոսի հաղորդումը Ասորեստանի ավանդական թագավոր Նինոսի կողմից Արաբիայի, Հայաստանի և Մարաստանի թագավորներ 'Αριαῖος-ի, Βαρξάνης-ի, Φάρνος-ի հպատակեցումը, ավելացնում է. «Իհարկե կարելի է մտածել վերևում հիշատակված՝ Սարգոնի ժամանակակից երեք անձնավորությունների մասին, հատկապես Ուրարտու-Հայաստանի վասալ երկրների Սիգրինայի տեր Էպարնուայի, Բուշտուի՝ Արիայի և Մուսասիրի՝ Ուրզանայի մասին: Սակայն շատ ավելի հավանական է, որ խոսքը հնարովի դեմքերի մասին է»[1]:

«*Վարձ պաշտամունքային տերմինի և Վարձ//Վարձայ անձնանվան շուրջ» վերնագրով փոքրիկ հոդվածում տողերիս հեղինակը ցույց է տվել, որ՝ 1. Բարզանէս // *Վարզանէս < *վարձ-ան- անվան հիմքում ընկած *վարձ տերմինը ծագում է հ.-ե. *u̯er- «խոսել, կանչել» արմատի ստորին ձայնդարձից՝ աճականով, որ՝ 2. նրա ավելի վաղ գրանցումը առկա է մ. թ. ա. IX դ. ասորեստանյան սեպագրերում ^{URU}Barzaništun տեսքով (Barza-ništun հմմտ. ^{URU}Ništun <* նիստ - ուն), որ՝ 3. այդ տերմինն է ընկած վաղմիջնադարյան հայ մատենագիրների ավանդած Վարձ//Վարձայ անձնանվան և Վարձաւունի տոհմանվան հիմքում, որ՝ 4. Βαρξάνης անվանաձևի տարբերակն է Մուծածիրի քուրմ-արքա Urzana-ի (մ. թ. ա. VIII դ.) անունը[2]: Գրեթե

---

[1] Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն (ակունքները, X–VI դդ. մ. թ. ա.), Երևան, 1972, էջ 327:

[2] Տե՛ս Ս. Պետրոսյան. *Վարձ պաշտամունքային տերմինի և Վարձ//Վարձայ անձնանվան շուրջ.– «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական չորրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 44: Ի դեպ, այս ժողովածուում փոքրիկ հոդված ունի նաև Տ. Դալալյանը:

նույնը կարելի է կարդալ նաև տողերիս հեղինակի «Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում» մենագրության մեջ[3]*:*

Որ Տ. Դալալյանը անտեսել է Βαρξάνης*-ի հնդեվրոպական-հայկական այս ստուգաբանությունը, հարցի մի կողմն է, բայց որ նա գրում է, թե «*Բարզանես *անձնանունը, անկասկած, իրանական ծագում ունի», թե «*Βαρξάνης *սկյութական անունը պետք է որ նշանակի «հմայիչ, սիրելի, սիրեկան» (էջ 251, 253), մնացել են անապացուցելի: Առհասարակ, անհասկանալի է, թե հոդվածագիրը ինչու է ապարդյուն ջանքեր թափել ինչ-որ կապեր գտնելու համար Բարզանեսի, Արա Գեղեցիկի և Սարդուրի I-ի (մ. թ. ա. 845–825 թթ.) միջև: Ընդ որում, դա փորձում է անել սկյութների և սկյութերենի միջոցով: Սեպագիր աղբյուրներից հայտնի է, որ սկյութները Առաջավոր Ասիայում հայտնվել են ոչ վաղ, քան մ. թ. ա. VII դարի սկզբները, ասել է, թե Սարդուրի I-ից շուրջ 150 տարի հետո: Էլ որտեղի՞ց նրանք կարող էին ծանոթ լինել Ուրարտուի այդ արքային, որին էլ իբրև թե նրանք կոչել են* *MiΘra-wārzāna, *Baga-wārzā(n) *կամ նման մեկ այլ անունով (էջ 260): Հոդվածագրի կարծիքով՝ այդ անուններից մեկն էլ անցո «մարական-սկյութական վավերագրերից» անցել է «աքեմենյան արխիվներ», այնտեղից՝ «Հերոդոտոսի, թե Կտեսիասի» աշխատությունները, սրանցից որևէ մեկից էլ «*Բարզանես *անվանաձևը Դիոդորոսը քաղել է» (էջ 260): Թե այդ երկար ճանապարհորդության ո՞ր հատվածում է երկբաղադրյալ չավանդված անունը կորցրել իր գլխավոր մասը, անհնար է անգամ ենթադրելը:*

Զարմանալի են հոդվածագրի առաջարկած և Սարդուրի I-ի անվանը վերագրված «Իշթարը իմ ամրոցն է» ստուգաբանության վերիմաստավորումները: Իբր, այն «պետք է ունենար մոտավորապես հետևյալ իմաստները՝ «Իշթարի հովանավորյալ» (?), «Իշթարին ձոնված» (?), «Իշթարի տուրք» (?), (էջ 258): Հարցականները հոդվածագրինն են: Ի դեպ, Սարդուրի I-ի անունը աքադական չէ: Եթե Սարդուրի II-ի (մ. թ. ա. 764–735 թթ.) անունը բերվում էր նաև IŠTAR-duri *տեսքով, դա չի նշանակում, թե այդ գրելաձևը պետք է տարածել* Sarduri *անվան վրա ընդհանրապես: Սարդուրի I-ի անունը աքադական ստուգաբանություն ունենալ չէր կարող այն պարզ պատճառով, որ Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը այն հիշատակում է* Si-e-du-ri *տեսքով: Այստեղ աքադական Իշթար դիցուհու անվան հետքն անգամ չկա: Հոդվածագրին պետք է հայտնի լիներ, որ շատ ավելի վաղ* Sarduri *անվանը հնդեվրոպական ստուգաբանություններ էին տվել Ա. Հ. Մեյսը և Գր. Ղափանցյանը՝ այն առնչելով լյուդիական* Σαρδις *արևաստծու անվան և հնդիրանական լեզուների «տարի» նշանակող համապատասխան բառերին: Տողերիս հեղինակի հոդվածներից մեկում այդպիսի ստուգաբանությունը ամրապնդվում է նոր փաստարկմամբ*[4]*:*

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

---

[3] *Տե՛ս Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն. Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Երևան, 2006, էջ 412–414:*

[4] *Տե՛ս Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն. Արևի աստվածը վաղ Ուրարտուի կրոնական քաղաքականության մեջ.– ՊԲՀ, 2005, № 3, էջ 238–240:*